ԿՐԵ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉ., ՄՈՍԿՎԱ, 1930

8215
Հ 76

4-493 2

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

4-493 2

ԿԻՇԸ

Г.П.Б-ка обяз. экз.
Лнгр. 1930 г.
Акт № 4-611



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1930

0 3 MAY 2013

Կլիշեները տրամադրել է Գ. Ֆ. ՄԻՐԻՄԱՆՈՎԻ Հրատարակչությունը

Ռուս. փոխադրեց՝ Բ. Մար.

Гл. лит № А—95345 Заказ № 16 Тираж 5000 экз.
Книжн. ф-ка Центриздата Народов СССР. Москва, Шлюзовая наб., 10



Շատ ու շատ տարիներ սրանից առաջ Հյուսիսային սառուցյալ ովկիանոսի ափին ապրում էր Կիշը։ Նա իր գյուղի առաջնորդն էր. մի շարք յերջանիկ տարիներ ապրեց ու մեռավ՝ իր ժողովրդից շատ հարգված ու մեծարված։

Միայն ծերերն են հիշում նախնիքներից ու պապերից ավանդ մնացած այս զրույցը, վոր իրենց նախահայրերից ու պապերից են լսել։ Ու այս զրույցը նրանք իրենց հերթին կպատմեն իրենց յերեխաներին ու թոռներին։

Յերբ սկսվում են ձմրան գիշերները, սառցե լեռներում ձյունախառն հողմն է բարձրանում և ոդը լցնում սպիտակ մաքուր ձյունով, սկսվում է զրույցների ժամանակը Կիշի մասին, թե ինչպես նա դարձավ գյուղի առաջին մարդը, գերազանցելով բոլորին իր խելքով ու իր քաջությամբ։

Նա մի հիանալի յերեխա յեր,—այդպես է ասում ավանդությունը,—ուժեղ, առողջ և արդեն տեսել եր տասնյերեք արև, վորովհետև յուրաքանչյուր տարի ձմեռային արևը յերկիրը մեկ պատում է խավարի մեջ և մեկ նորից վերադառնում, վորպեսզի մարդիկ կարողանան տաքանալ նրա ճառագայթներով, կարողանան մեկ մեկու յերես տեսնել։ Կիշի հայրը քաջ վորսորդ եր։ Նա մեռավ մի սով տարի բևեռային մի վիթխարի արջի հետ կռվելիս, փրկելով իր ժողովրդի կյանքը։ Բորբոքվելով նա այնքան մոտեցավ արջին, վոր արջը չարդեց նրա կողերը։ Միացած ուժով արջին սպանեցին և ժողովրդին սովից փրկեցին։

Կիշը նրա միակ վորդին եր և հոր մահից հետո մնաց մենակ իր մոր հետ միասին։ Բայց մարդիկ միշտ հակված են ամեն բան շատ շուտ մոռանալու. մոռացան և Կիշի հոր քաջագործությունները։ Բայց քանի վոր Կիշը յերեխա յեր դեռ, իսկ նրա մայրն անպաշտպան մի կին, շուտով մոռացան նրանց, ու նրանք սկսեցին ապրել շատ վատ վիճակում։

Մի յերեկո, խորհրդում, գյուղի առաջնորդ Կլոշ-Կվանի մեծ այրում Կիշը ցույց տվեց իր տաքարյունությունը, իր հոգու ամբողջ կորովը։ Տեղից վեր կենալով, հասակավոր մարդու նման, սպասեց, և յերբ բոլոր ձայները լռեցին՝ ասաց.

— Այո՛, այդ ճիշտ է, մեզ տալիս են միս, բայց ինչպիսին... հին, կո՛շտ, վոսկրոտ։

Ցեվ սպիտակահեր ծերունիների և վիթխարի, ուժեղ յերիտասարդ վորսորդների բերանները բաց մնացին։ Ցերբեք նրանք չեյին լսել, վոր յերեխան խոսեր հասակավոր մարդու նման և համարձակ՝ յերեսներին շպրտեր այդպիսի խոսքեր։

Բայց Կիշը խիստ համառ կերպով շարունակեց.

— Ցես գիտեմ, վոր իմ հայր Բոկը նշանավոր վորսորդ եր, ահա թե ինչու յեմ ասում այդ խոսքերը։ Ասում են, վոր նա վորսորդությունից բերում եր առատ միս ավելի քան յերկու ճարպիկ վորսորդ կբերեյին և ինքն ել բաժանում եր այդ, հոգալով այն մասին, վոր բոլորը լինեն կուշտ՝ սկսած մեծից մինչև փոքրը։

— Դե, դե,— բղավեցին բոլորը.— դո՛ւրս տարեք այդ տղային, պառկեցրեք թող քնի։ Նա դեռ այնքան չի մեծացել, վոր իրավունք ունենա այդպես խոսելու ծերերի և հասակավորների հետ։

Կիշը հանգիստ սպասեց մինչև աղմուկը դադարի։

— Քեզ, Ուզ-Գլոկ, կին ունես,— ասաց նա,— և դու խոսում ես նրանց տեղ. իսկ քեզ, Մուսսուկ, կին և մայր,— և դու խոսում ես նրանց տեղ։ Իմ մայրը վոչ վոք չունի բացի ինձնից, ուստի և խոսում եմ յես։ Իմ հայր Բոկը իր կյանքը զոհեց իր ժողովրդի համար, ուստի և արդարացի յե վոր յես, նրա վորդին և Իկեեզան՝ նրա կինը—լինենք կուշտ, յերբ գյուղում կա միս։ Ցես, Կիշ, Բոկի վորդին, ահա այս ուզեցի ասել։

Նա նստեց, լսելով ի պատասխան իր ասածներին՝ արհամարհանք, աղմուկ և աղաղակ։

— Վո՞ւրտեղ է այդ լսված, վոր յերեխաները խոսեն խորհրդում,— շշնջաց ծեր Ուզ-Գլոկը։

— Եդ վո՞նց է, ծծի յերեխեքը մեզ՝ տղամարդկանց խելք են սովորեցնում,— բարձր բղավեց Մուսսուկը։— Ել ի՞նչ տղամարդ եմ, վոր թույլ տամ մսի համար լացող տղին ծիծաղելու ինձ վրա։

Ցասումն իր գագաթնակետին հասավ։ Տղամարդիկ հրամայեցին Կիշին, վոր գնա քնի, ուրիշները սպառնացին նրան բոլորովին զրկել մսից և ծեծել նրան՝ հանդուգն խոսքերի համար։ Կիշի աչքերը փայլեցին, դեմքը մռայլվեց՝ լցվեց արյունով։ Վեճի ամենատաք ժամանակը վեր թռավ ու վոտքի կանգնեց։

— Լսեցեք հեյ տղամարդիկ,— գոչեց նա,— այլևս դուք ինձնից խորհրդում վոչ մի խոսք չեք լսի, մինչև դուք ինքներդ կգաք ինձ մոտ և կասեք—«Կի՛շ, արի և խոսի՛ր. այդ լավ է և այդպես է մեր կամքը»։ Ահա՛ իմ վերջին խոսքը։ Բոկն, իմ հայրը, քաջարի ու մեծ վորսորդ եր։ Ցեվ յես, նրա վորդին, ինքս կգնամ վորսի միս կճարեմ։ Ցեվ այսուհետև թող հայտնի լինի ձեզ, վոր միսը արդարացի յեմ բաժանելու։ Վո՛չ մի այրի, վո՛չ մի տկար լաց չի լինի միս խնդրելով այն ժամանակ, յերբ ուժեղները շատակերությունից տանջվում են։ Ցես վերջացրի։

Հեգնանք, արհամարհական ծաղր ու ծիծաղ լսվեց նրա յետևից, բայց Կիշը պինդ սղմեց ատամները և դուրս յեկավ մեծ խրճիթից, առանց նույնիսկ յետ նայելու։

Հաջորդ որը նա դուրս գնաց ծովի ափով հենց այն տեղով, ուր ցամաքից հետո սկսվում եյին սառույցները։ Տեսան, վոր նա ձեռքին ուներ նետ և աղեղ, սլաքների վոսկրյա ծայրեր և ուսին՝ հոր մեծ նիզակը։ Ցեվ այս առթիվ շատ խոսեցին, կատակեցին։ Դեռ այդպիսի դեպք չեր յեղել, վոր նման ծծկերները գնան վորսի ու մենամենակ։ Վորսորդները որորեցին գլուխները, ինչ վոր մի բան գուշակելով, շշնջացին, կանայք խղճահար նայեցին Իկեեզին, վորի դեմքը թե հպարտ եր և թե տխուր։

— Նա շատ շուտով յետ կդառնա, մխիթարում եյին նրան։

— Թող մի փորձի — ասում էին վորսորդները, — դա լավ խրատ կլինի նրան։ Նա շատ շուտով յետ կդառնա՝ խելքը գլուխը հավաքած, ջրից խաղաղ, խոտից խոնարհ։

Անցավ մեկ որ թե յերկու որ։ Յերրորդ որը փչեց սաստիկ հողմ ու բորան, իսկ Կիշը դեռ չեր յերևում։ Իկեեգան փետում եր գլխի մազերը, իսկ յերեսին մուր եր քսել՝ սուգի նշան։ Մյուս կանայք հարձակվեցին իրենց տղամարդկանց վրա նախատինքով, վոր նրանք են պատճառ դարձել, յերեխային մահվան մատնել։ Տղամարդիկն էլ լուռ էին, սպասելով վոր դադարի հողմն ու բորանը, իրենք գնան վորոնելու մեռած Կիշին։

Բայց չորրորդ որն, առավոտյան, Կիշը մտավ իրենց գյուղը։ Վերադարձավ առոք-փառոք, սպանած սպիտակ արջի մսի խոշոր մասերն իր շալակին։ Յեվ նրա քայլվածքը՝ խրոխտ, խոսքերը հպարտ, խրոխտ։

— Շներին շուտ ժողովեցեք, առեք սահնակ և գնացեք իմ յետ յեկած ճանապարհով որ ու գիշեր, — ասաց Կիշը։ — այնտեղ, սառույցների վրա շատ շատ միս կա — մի հատ մեծ արջ և յերկու հատ արջի ձագեր։ Իկեեգան, ուրախացած՝ ինքն իրեն մոռացել եր։

Կիշը, մեծի նման՝ — հա՛ց տուր, ասաց, ինձ ուտելու, Իկեեգա, յես հոգնած եմ։ Թո՛ղ ինձ, մի քիչ պառկեմ, քնեմ։

Յեվ նա գնաց մտավ «իգլոն»*, մի կուշտ կերավ, քսան ժամով քնի ընկավ։

Ժողովրդի մեջ մեծ կասկած, խոսակցություն ու վեճ ծագեց բևեռային սպիտակ արջի վտանգավոր վորսի մասին, յերբեք անգամ վտանգալից՝ ձագեր հանած եզի վորսի մասին։ Վորսորդները կասկածեցին Կիշի ուղիղ ասածներին։ Ո՞ւր յերեխա, ուր արջավորս, այդպիսի հրաշք չի կատարված։ Բայց կանայք, միսը ցույց տալով, գովում էին քաջ վորսորդին։ Կարելի՞ յեր չհավատալ։ Վերջ ի վերջո վորսորդները ճամփա ընկան, փնթփնթալով՝ «յեթե նույնիսկ նա իսկապես արջ է սպանել, նա չեր գցել բախտի կամքին, այլ կես կաներ միջից կարգին»։ (Հյուսիսում սպանված արջի դիակը անմիջապես պետք է մաշկել, կտրատել, մաքրել, հակառակ դեպքում

* Եսկիմոսների անակը։

միսը սառչում է և այնքան կարծրանում, վոր ամենասուր դանակն անգամ անզոր կլինի կտրտել, իսկ քաշ տալ անհարթ սառույցներով յերեք հարյուր կիլո քաշ ունեցող սառած միսը բոլորովին անհնար է)։

Տեղ հասնելով՝ նրանք գտան սպանված արջեր՝ փորոտիքները դուրս հանած, մարմիններն էլ չորս մաս արած և այդ բանն ապացույց եր, վոր գործին տեղյակ մարդու ձեռքն եր արել այդ բոլորը։

Յեվ այդպես սկսվեց Կիշի գաղտնիքը, վոր որեցոր տարածվում եր ու տարածվում... Նա մի ուրիշ անգամ սպանեց մի գազան և հետո մի վիթխարի կատաղած արջ, մի եգ արջ։ Սովորաբար նա վորսի գնալուց անհետանում եր յերեք կամ չորս որ։ բայց պա-

տահում եր և ամբողջ շաբաթ նա անց եր կացնում վորոնումների մեջ, թափառելով ձյունածածկ դաշտերում։ Նա չեր ուզում ուղեկիցներ վտանգալից արշավանքին։ Ժողովուրդը զարմանում եր Կիշի վրա, նրա անվախ կերպարանքին։

— Վո՞նց է նրան այդ աջողվում, ասում էին վորսորդները։ — Նա հետն յերբեք շուն չի տանում, իսկ առանց շան հնարավոր չե վորս անելը։

— Ինչո՞ւ միայն արջ ես վորսում, — դիմեց Կիշին Կլոշ-Կվանը։

Յեվ Կիշն անվախ, տեղն ու տեղը տվեց հարմար պատասխանը։

— Նրա համար, վոր արջը շատ մսալի յե։

Գյուղի մեծերն սկսեցին խոսել Կիշի կախարդական ուժի մասին։

— Վորսի ժամին նրան ոգնում են չար դևերը,— պնդում եյին մի քանիսը.— դրա համար նրա վորսը շատ հաջող ե։ Ապա ուրիշ կերպ ինչպես կարող եր նա հաջող լինել։

Գուցե վոչ թե չար դևերն են, այլ բարի վոգիներն են,— ասում եյին մյուսները։— Հայտնի յե, վոր նրա հայրը նրան մանկությունից սովորեցրել ե վորսորդության բարդ արհեստը։— Գուցե Բոկը՝ նրա հայրն ե վորսի գնում, վարժեցնում վորսորդական տոկունության։

Բայց բախտն ելի առաջվա պես նպաստում եր անվախ Կիշին. իսկ շատ հաջող վորս անողներն ոգնում եյին վորսած մսի փոխադրության (նրանց՝ անելու բան քիչ եր մնում)։ Հետևելով իր անմահ հոր որինակին, Կիշը միսը բաժանում եր խղճմտանքով. նա այդ բանում շատ արդար եր։ Ամենքն ել կուշտ եյին մնում — բոլորը՝ առանց բացառության։ Կիշը իր համար վերցնում եր այնքան, ինչքան հարկավոր եր։ Ահա թե ինչու նրան ամենքն ել սիրում ու մեծ հարգանքով եյին վերաբերվում։ Խոսում եյին, վոր ծերացած Կլոշ-Կվանի մահից յետո նա կընտրվի նոր առաջնորդ։ Սպասում եյին վոր նա խորհուրդ գա ու նորից իրենց շարքին նստի, բայց նա չեր գալիս ու չեր նստում խորհրդի. Կիշին խնդրել ամաչեցին. Կիշին խորհուրդ չկանչեցին։

— Ցես մտադիր եմ ինձ համար մի տուն շինել,— ասաց Կիշը Կլոշ-Կվանին և իր ընկեր վորսորդներին։ Նա կլինի մի մեծ «իգլո», վորտեղ յես և Իկեեգան կապրենք հանգիստ ու անվրդով։

— Շատ լավ, շատ լավ,— հանդիսավոր հաստատեցին Կիշի միտքը։

— Բայց յես դրա համար ժամանակ չունեմ. վորսորդությունն ե իմ գործը։ Թո՛ղ ժողովուրդը իմ բերած վորսի մսով սնունդ առնի և ինձ համար մի տուն շինի։

Ցեվ շինեցին Կիշի համար մի մեծ «իգլո», վորն իր տեսքով ու մեծությամբ գերազանցեց Կլոշ-Կվանի շինած այրին։ Կիշն և իր մայր Իկեեգան բնակեցին այդ այրի մեջ։ Այդ որվանից Կիշն ու իր մայրն, իրենց յերջանիկ զգացին։ Ցեվ շատ գոհ մնաց Իկեեգան այն վիճակից, վոր իր վորդին գյուղի միջին ընդհանուր

հարգանքի արժանացավ։ Կիշն այդպիսով գյուղի առաջին և խելոք մարդը դարձավ։ Ամենքը գնում եյին այցելության ու խորհրդի, տղամարդկանց հետ վիճելիս՝ դիմում եյին նրա խելոք և ոգտակար խորհուրդներին։

Բայց ամենից գլխավորը, վոր զբաղեցնում եր ամենքին, դա— Կիշի զարմանալի վորսորդական խոր գաղտնիքն եր։ Ու մի անգամ, Ուգ-Գլուկը խոսք բաց արեց ու յերեսին այս մեղադրանքը շպրտեց՝ — քեզ ոգնում են չար վոգիներն,— ասաց Կիշին Ուգ-Գլուկը, դրա համար ել քո վորսը միշտ հաջող ե վերջանում։

— Միթե վորսիս միսն անհամ ե,— պատասխանեց նրան Կիշը։— Ասա, ո՞վ ե հիվանդացել իմ բերած վորսի մսից։ Ո՞վ ե քեզ ասել, վոր այստեղ կախարդություն կա։ Կամ՝ գուցե դու յես կուրորեն հնարում սրտիդ միջի չար նախանձից։ Ցեվ Ուգ-Գլուկը հեռացավ շատ շփոթված, ամոթահար, և կանայք ծիծաղեցին նրա վրա։ Բայց մի գիշեր, խորհրդի մեջ, յերկար բարակ վեճից հետո, վորոշեցին, վոր կուղարկեն յերկու վորսորդ Կիշի յետքից վորսորդության մեծ գաղտնիքն իմանալու։ Ցեվ յերբ Կիշը վորսի յելավ, յերկու ջահել լավ վորսորդներ՝ Բիմն ու Բաուն, գաղտնի կերպով յետքից գնացին։ Հինգ որ անցած, նրանք դարձան։ Դարձան՝ աչքերը լայն բացած և անհամբեր սպասում եյին վոր իրենց տեսածը պատմեն ժողովրդին։ Շտապ խորհուրդ հրավիրեցին Կլոշ-Կվանի մեծ խրճիթում, և սկսեց Բիմը պատմել.

— Ցեղբայրներ, ինչպես վոր մեզ հրամայված եր, մենք գնացինք Կիշի յետքով, նրանից թաքուն ու աննկատ։ Առաջին որվա կես ճամբին նա հանդիպեց մի մեծ արջի։

— Մի ահագին արջ,— հաստատեց վորսկան Բաունը և սկսեց ինքը պատմել։— Բայց արջը չեր ուզում կռվել — նա իսկույն յետ դարձավ մրթմրթալով, անցավ գնաց սառույցներով։ Մենք այդ տեսանք ովկիանի ժայռոտ ափից։ Արջը գալիս եր դեպի մեզ, իսկ անվախ Կիշը՝ յետևից. նա չեր վախենում մեծ արջից։ Արջի յետքից հայհոյում եր, ձեռներն ուժով թափահարում ու աղմկում։ Արջը սկսեց բարկանալ, կանգնեց յետին վոտքերի վրա ու ահեղ մռնչաց։ Բայց անվեհեր վորսորդ Կիշը գնում եր հենց արջի վրա։



— Հա՛, հա՛, նորից խոսքը խլեց Բառունից Բիմը, — գնաց ուղիղ դեպի արջը, արջն ել վազեց Կիշի վրա։ Կիշը փախավ, բայց փախչելիս նա մի գնդիկ գցեց արջին, մի շատ համեղ կլոր գնդիկ։ Արջը կանգնեց, քիչ հոտոտեց և գցած գունդը կուլ տվեց։ Իսկ Կիշը առաջ եր վազում ու շարունակ գետին քցում իր գնդիկներից։ Յեվ արջը հենց կուլ եր տալիս գնդիկները։

Լավեցին բացականչություններ և թերահավատության ձայներ։ Իսկ Ուզ-Գլուկը կասկածեց պատմածի ճշտությանը։

— Մենք տեսանք այդ մեր սեփական իսկ աչքերով, — ասաց Բիմը։

Յեվ Բառունը այդ հաստատեց։

— Այո՛, տեսանք մեր սեփական իսկ աչքերով։

— Յեվ այս բանը շարունակվեց մինչև վոր արջը «ծառս ելավ» ցավից վոռնաց ու թաթերով թափահարեց։ Կիշը շարունակ վազում եր սառույցներով՝ աչքերը արջին բևեռած։ Բայց արջը ուշք չեր դարձնում։ Անտանելի ցավից տանջվում, գալարվում եր ու մռնչում։

— Նա տանջվում եր փորի ցավից, — ընդհատեց Բառունին Բիմը։ — Աղջն ինքն իրեն ճանգրտում եր իր թաթերով ու ցատկոտում, շան ձագի պես կաղկանձում եր և գոռգոռում։ Ակներև եր, վոր այդ ցավը հանաք բան չեր արջի համար։

— Յերբեք կյանքումս յես չեմ տեսել մի այդպիսի տեսարան — շարունակեց խոսքը Բառունը։ — Յեվ ինչ վիթխարի արջ եր այն...

— Կախարդություն ե ասածդ, — բացականչեց Ուզ-Գլուկը։

— Յես չգիտեմ, պատասխանեց նրան Բառունը, — յես ասում եմ ձեզ այն, ինչ տեսել են իմ աչքերը։

— Արջը շուտով ուժից ընկավ, շնչառությունը կտրվեց, վորովհետև նա շատ ծանր եր և վեր ու վայր եր թռչկոտել։ Հանդարտ գնաց ծովի ափով, որորելով մեծ գլուխը։ Մեկ նստում եր ու մեկ վոռնում, մեկ կաղկանձում ու մեկ տնքում։ Կիշը գնաց արջի յետքից, մենք քայլ առ քայլ Կիշի յետքից՝ ամբողջ որը և յերեք հաջորդ որերը։

Արջը գնալով թուլանում եր և անընդհատ ցավից վոռնում։

— Կախարդություն ե բացարձակ, — բացականչեց Ուզ-Գլուկը, — դա հմայք ե, յես ասում եմ։

— Այո՛, կարող ե պատահել։

Բիմը Բառունին ընդհատեց ու սկսեց նրա տեղը պատմել.

— Արջը գնում եր որորվելով, մեկ շեղվում եր ու յետ դառնում, դես-դեն ընկնում, ճանապարհից դուրս եր գալիս. վերջ ի վերջո, նա փռվեց գետնին։ Արդեն այնքան թուլացած եր, վոր այլևս անվտանգ եր։ Այդ ժամանակ Կիշը մոտեցավ արջին և նիզակը խրեց բուկը։

— Իսկ հետո, — հարցրեց Կլոշ-Կվանը։

— Հետո թողինք Կիշին, վոր կտրատում եր սպանված արջին, իսկ մենք շտապեցինք գալ այստեղ, պատմելու՝ ինչպես Կիշը սպանեց արջին։

Նույն որը, յերեկոյան, կանայք, ով վորքան կարող եր, արջի միսը տուն կրեցին, իսկ տղամարդիկ ել խորհրդի ժողովեցին։

Յեվ յերբ Կիշը գյուղը մտավ, նրան կանչեցին խորհրդի։ Բայց Կիշը նրանց պատասխանեց, վոր սոված ե և շատ հոգնած և բացի այդ, իր խրճիթը այնքան մեծ ե ու ընդարձակ, վոր կարող ե տեղավորել շատ ժողովուրդ՝ ամբողջ խորհուրդ։

Հետաքրքրությունը մեծ եր։ Վորոշեցին ու նրա մոտ ժողովեցին վողջ խորհուրդը՝ Կլոշ-Կվանի առաջնորդությամբ։

Կիշն ընթրում եր այդ միջոցին, բայց ընդունեց մեծ հարգանքով նա բոլորին, և ամենին ել — համաձայն իրենց դիրքին ու կոչմանը — նստեցրեց պատշաճ տեղում։ Իկեեգան շատ հուզված եր, իսկ Կիշը՝ հանգիստ։

Կլոշ-Կվանը հայտնեց Կիշին Բիմի և Բաունի պատմածը և նրան ասաց խստորեն.

— Հայտնիր մեզ քո գաղտնիքն, ով Կիշ։ Զար վոգինեբրն են արդյոք ոգնում քեզ վորսի ժամին, թե...

Կիշը նայեց նրան ու ժպտաց։

— Վո՛չ, ով Կլոշ-Կվան, ուր մանուկ, ուր կախարդ վհուկ. յես ինչ գիտեմ նրանց մասին։ Յես գտել եմ մի հեշտ միջոց՝ մեծ արջերին հաղթահարող։ Դա յերբեք կախարդություն չե, այլ ուղղակի խելքի գործ ե։

— Յեվ ամեն մարդ կարող ե անել այն, ինչ դու յես անում։

— Այո՛, այո՛, ամեն մի մարդ։

Տիրեց յերկար խոր լռություն։ Վորսորդներն իրար նայեցին, Կիշն ընթրիքը շարունակեց։

— Յեվ... և... դու կպատմես մեզ այդ մասին, ով Կիշ, — դողաց Կլոշ-Կվանը։

— Այո՛, յես կպատմեմ, — պատասխանեց համեստ Կիշը, — և ծծելով վերջին վոսկորը, վեր կացավ նա իր տեղից.

— Դա մի շատ պարզ, հասարակ բան ե, ապա նայեցեք։

Նա վերցրեց կետ ձկան բեղի մի բարակ շերտ և դա ցույց տվեց բոլորին։ Շերտի ծայրերը սուր եյին ասեղի պես։ Յեվ խնամքով նա թոլորեց բարակ շերտը ողակաձև, այնպես, վոր իր մատների մեջ անհետացավ։ Նա հանկարծ բաց թողեց ձեռքից — և շերտը

կրկին ուղղվեց։ Յեվ հետո, կրկին վոլորեց այդ ու վերցրեց կետի ճարպի փոքրիկ կտոր։

— Ահա տեսեք, — ասաց Կիշը, — պետք է վերցնել մի կտոր ճարպ, փորել այդ և նրա մեջը դնել կետի բեղի շերտը այսպես կծկած, ողակաձև և վրայից ճարպով ծածկել այնպես, վոր չնկատվի, թե մեջը բան կա։ Ճարպը ցրտում սառչելով, դառնում է մի փոքրիկ գնդիկ։ Արջը գնդիկը կուլ է տալիս. ճարպը հալվեց թե չե, շերտը իսկույն ուղղվում է և իր յերկու սուր ծայրերով արջի ստամոքսն է խրվում։ Արջը ուժասպառ է լինում սաստիկ ցավից, այդ ժամանակ դուք սպանում եք նրան նիզակով։ Դա շատ հասարակ մի բան է։

— Ո՛, — բացականչեց Ուդ-Գլոկը։

— Ա՛, — բացականչեց Կլոշ-Կվանը։

Այդպես ամեն մեկն՝ իր հանգով բացականչեցին և բոլորը այդ հասկացան։

Ահա այն ավանդությունը Կիշի մասին, վոր ապրում եր անհիշելի ժամանակներ, բևեռային ովկիանի մոտ։

Յեվ քանի վոր Կիշը գործում եր իր խելքով, վոչ թե ինչ վոր կախարդությամբ, նա՝ ծնված մի աղքատ խրճիթում՝ առաջին մարդը դարձավ գյուղում։ Նա իր կյանքը անց եր կացնում միշտ հաջող վորսերում. նրա տոհմը բարորության մեջ եր ապրում, և վոչ մի թույլ մարդ և վոչ ել այրի—գիշեր ցերեկ չեյին տանջվում, մսի կարոտ չեյին քաշում։

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

Լույս են տեսել

ՅԵՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ	(մեծադիր, նկարազարդ)		15 կ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒՅԶԿԱՆ	»	»	28 կ.
ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊԼԱՆՈՎ	»	»	28 կ.
ՄՈԾԱԿԻ ՅԵՎ ԱՐՋԻ ՄԱՍԻՆ	»	»	15 կ.
ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ	»	»	16 կ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ	»	»	18 կ.
ՅԵՐԱԺԻՇՏ ԴԱՆԻԿԸ	»	»	20 կ.
ԴՈՇԻԿԸ ՃԱՀՃՈՒՄ	»	»	20 կ.
ՏԻՄԸ	»	»	20 կ.
ՓՈՔՐԻԿ ԽՈՆ	»	»	18 կ.
ՌԻԿԿԻ-ՏԻԿԿԻ-ՏԱՎԻ	»	»	25 կ.
ՀՆԴԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ	»	»	18 կ.
ՍԱՌՅԻ ՎՐԱ	»	»	25 կ.
ԻՆՉՈՎ ԿՈՒՉԵՅԻՐ ՃԱՄԲՈՐԴԵԼ	»	»	25 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՔՈՆ ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱՎ			25 կ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ			12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ			12 կ.
ՊԱՏՄՎԱՅՔՆԵՐ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ			8 կ.
ՌԱՁՄԻ ՈՐԵՐ			20 կ.
ԹՌՉՈՒՆՆԵՐ (գունատիպ այլբոմ)			20 կ.
ՄԻ ԳԻՇԵՐ ԱԾԽԱՀԱՆՔՈՒՄ (մեծադիր. նկարազարդ)			15 կ.
ԿՈՒՏԻԿՆ ՈՒ ՔՈՒՉԻԿԸ	»	»	15 կ.
ՄԵՐ ՎԱԳՐԻԿԸ	»	»	25 կ.
ԿԻՇԸ	»	»	15 կ.
ԽՈԴՅԱՆ	»	»	20 կ.

Инв. № 39954

ՊԱՀԱՆՋԵՑԵՔ
ՄԵՐ ԳՐԱՏՈՒՑԱԿԸ, ՎՈՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ.
ԴԻՄԵԼ՝ Москва, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.

20352
15 կոп.
657
4-493 а

ДЖЕК ЛОНДОН

Повесть о Кише

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С С С Р
Москва, центр, Никольская, 10.